6. ՄԱՐԹ ՕՏՈՂ ԱԽՃԻԳՅԸ

Ինըմ ա, չինըմ մին կընեգյ։ Էտ կընգանը ինըմ ա մին տըղա, էրկու ախճիգյ։ Մըեծ ախճիգյը շատ օտող ա։

Մին օր ըտրանց մարը օղըմ ա հաց թխի։

Տըղին ասըմ ա. — Քյինի ճա̈խ պեր, տանինք թորենը վառինք։ Յըես էլ ճիրի յըմ քյինըմ։

Տանը վեչ մինը կար վեչ։ Էտ ախճիգյը ըրըրոցան տուն ա կյամ, քյինում մեզա̈րին յրա̈ն փըռած պա̈նչերը լոխ օտըմ։

Ախպերը կյամ ա, տըեսնըմ, մընըմ մաթ մնացած։

Ասըմ ա. — Ա՛ մար, քանի էս վեչ մըծացած, տափան կացածը պուճուր ա, տար մին տեղ ռա̈դ ըրա, էտ վեր մըծանա, մեր տոնը քանդիլու յա։

Մարը հըվատըմ չի։

Մին գոնըմ մարը կյողլ ա կըենըմ, ըտրա թուսը պահըմ։ Տեսնըմ ա ախճիգյը ուրուրուցան տուն եկավ, ամաններին մածունը լոխ կերավ, էլհա նի մտավ ուրուրուցը։

Տըղան մորըն ասըմ ա. — Ա՛ մա̈ր, յըես էլ խատի կարիլ չըմ ապրիմ, էս վեչ մըխթա̈րա̈ծր մեր կըլո̈խը մին օյին ա պերելու, վերչը մըեզ ուտելու յա։

Ասըմ ա, պըրծնըմ, մին չոթանի մըհակ յոր օնըմ, հըղե ինըմ, քյինըմ հեռու տեղեր։

Շատ ա քյինըմ, խըրեգյ ա քյինըմ, մին քյարվանի յա չիհըմ։ Էտ քյարվանին մըեծը ըտրանա հըրցնըմ ա, ասըմ. — Ախպեր,

ծեռքիտ մրհակը հի՞նչ փեղա յա, թա գլիդացիը, յրես քյրեզ մին օղտի պեռնը վրեսկե կտամ։

Էտ տրղան վեչ մին պեն չի ասրմ, սուսրփուա ուրան ճրնապարրն ա քյինրմ։

Քյինրմ ա, քյինրմ, տրեսնրմ մին ծորրմ մին ծոխ ա եր ինրմ։ Մրթկրմը տինրմ ա, վեր հինչ էլ ինի, էտ ծոխին յրան քյինի։

Քյինրմ ա, տրեսնրմ էրկու քոռ մարթ, մին տան մեչի ապրրմ ըն։ Ըտրանք շատ հարուստ ըն ըրվրմ, վեչխարի սուրունը տրռանը, ամմա պահող չի կա, ժառանգ էլ չունին, թա ուրանց վեչխարը պահի։

Էտ տրղան մրթկրմը տինրմ ա ըտրանց քրշտին կենա, ըտրանց վեչխարը պահի, ասի էլ վեչ, թա ինքյը հո՞ւ վա՞։

Անց ա կրենրմ մին խիլլա վախտ։ Մին օր էտ քոռ մարթը ասրմ ա. — Ա՛ կրնեգ, համոթ չինի հրրցնիլը. էս ա շատ վախտ ա, փորրս քրշտանրմ չի։

Կրնեգլրն էլ մարթին ա ասրմ, թա. — Ա՛ մարթ, բա ասիլ չը՞ս, իմ փորրս էլ չի քրշտանրմ։

Մարթրկնեգ խոսկը մին ըն անրմ, փրռնին, գլիդան էտ հո՞ւ վա, վեր ուրանց փալը թաքուն օտրմ ա։

Էտ տրղան էլ ա օգրմ, վեր գլիդան, թա ինքը հո՞ւ վա։

Վերջը տրղան նաղլ ա անրմ, թա ինքը հու վա, հունց ա ըտեղ ինգալ, ասրմ ա. — Ցրես ծրեզ օքուտ կտամ, թաք լհա ինձ յոր օնիք, հունցու ծեր վերթին։

Էտ պառավնին ռաղի յրն կրենրմ, համ էլ ասրմ. — Ա՛ բալա, վեչխարին սուրունն ամմեն վախտ կրքշիս բիդի էն վեր արևը մար ա մրններմ, էն զոլը, բիդի արևը տուս կյամ զոլը չի քրշիս, էտ զոլին շատ հարամիքյ կան։ Տրղան լրսրմ չի, քրշրմ ա բիդի արևը տուս կյալի զոլը։ Վեչխարը ըրրծրցնելավ տանրմ ա սարերը, ծրմակնին, տեսնրմ մին օռնոց ա կյամ։

Էտ օռնոցին յրան էտ տրղան քյինրմ ա, տրեսնրմ մին ծորրմ, մին կյուլ ծրնրմ ա։

Էտ կյուլը ըտրան ասրմ ա. — Ա՛յ տրղա, վեր վրեննրտ քրցալ ըս ըստեղ, լավ լրս ըրալ։ Վեր ճոխտ ծրնեցի, գլիդա վեր քյրեզ օտիլ չրմ, վեր կենդ ծրնեցի, քյրեզ կոտիմ։ Էտ տրղին սերտր օգրմ ա, թա ճաքի վրխնութունան։ Վեր էտ կյուլը ծրնրմ ա, էտ տրղան մինը յոր ա օնրմ, քրցրմ ուրան թորբան։

Ըտրանա եռը կյուլը էրկուսրն էլ ա ծրնրմ։ Էլ ետ տրղին օտրմ չի։

Էտ տրղան էրկու ծաքյ յոր ա օնրմ, կյամ տոն։ Ծրմակավը անց կրենալիս մին հրրսանիքի ծեն ա լրսրմ։

Ասում ա. — Մին մուտանամ, տրեսնամ, բալքաս էտ հրրսընքրմը ծանոթ մարթ ինի, մեր տանան հրրցնիմ։

Տրղան շատ ա բյինրմ, թա խրրեգյ, տրեսնրմ ա մին դուզ տեղ կյուլերին հրրսանիքն ա։

Էտ կյուլերը ըտրան ասրմ ըն. — Ցա բեդմա հում մեռ օտիս, Հտավ էլ մեր ասած հարցերին շողաբը տաս, յա թա չէ, քյըեզ օտելու ընք։

Էտ տրղան մին կոռ ա կտրրմ, հրղրմ, սրեպը մեչին տընրմ ըտրանց, սրտրսոտ ասրմ. — Լավ, հի՞նչ կինի, մինակ տուք ծրեր թաթերը պկրնք տիրեք էս փեղին ղաթրմը, էն սիպտակ տեղը փափուկ ա, ծեր թաթերը լավ ա ինելու։

Էտ կյուլերը ուրանց թաթերը տանրմ ըն տինրմ փեղին ղաթրմը։ Էտ տրղան փեղին ղաթան սրեպը հանրմ ա։

Էտ կոռը ըտրանց թաթերը հոփ ա տամ ցրվրցնրմ։ Կյուլերը դաչանք ըն անրմ, վեր ուրանց պեց թողի։

Էտ տրղան պեց չի թողրմ, ասրմ ա. — Տրեզ պեց կթողիմ էն վախտը, վեր տուք տաք իմ հոր նան իմ մոր աշկերը, համ էլ ասիք, թա հունց բեդմա լիվրցնինքյ։ Էտ տրղան կյուլերին պեց ա թողրմ։

Ըտրանց մեծը քյինրմ ա, մին տիրևրմ փրթաթած, աշկերը մին էլ մին թեփուռ պկրրմ, տամ էտ տրղին, ասրմ. — Ինք առ, հեսե աշկերը, քյըեղ ընք տամ։ Կրտանիս տեղերը տինիս, էս թեփուռն էլ կբրսիս լիվրցնիս։

Տրղան օրախ-օրախ կյամ ա տոն, ըտրանց աշկերը տեղը քրցրմ, թեփուռավը քրսրմ, լիվրցնրմ, էտ քոռ մարթն նան կընեգյը լրվանրմ ըն, աշիարքրս ուրանցրն ա տրեռնրմ։

Էտ տրղան ուրան թորրան հանրմ ա էն էրկու կյուլին ծաքը, ասրմ. —Ա մար, ըստրանց լավ եշի, թող մրծանան, մրեզ պեթկը կրկյան։

Տանն իլած վախտրն էլ ինքրն ա ուրան ծեռքավը օտել տամ։ Էտ ծաքերը ըտրա յրան սրվերրմ ըն, մրծանալավ ըտրան քյոմաղյ ըն անրմ։

Անց ա կենրմ մին խիլլա վախտ։ Մին օր էլ էտ տրղան ուրուգյունը տանը նստած քընենքյ ա անրմ, մրետրն ա քրցրմ ուրան հարաղաթ մորը, օղրմ ա քյինի ընդրանց տրեսնա, ամմա հրմանշրմ ա էտ էրկունշի ծրնողներեն ասի, լհա տրխուր նրստրմ ա։

Էտ պառավնին հրրցնրմ ըն, թա. — Ա՛ բալա, խե՞ ըս բեքյեփ։

Տրղան ասրմ ա. — Դե ասուծանա թաքուն չի, ծրղանա հի՞նչ

թաքուն պահիմ, օզըմ ըմ մին էրկու օրավ քյինիմ տոռ, մեր խալխին տըեսնամ։ Ըտրանք համոզ ըն ինըմ։

Մարըն ասըմ ա. — Բա՛լա, քյինի, ամմա էրկու-իրեք օրան իվիլ կըենաս վեչ, մունք քյըեզ սըվերալ ընք, կարիլ չընք առանց քյըեզ կրենանք։

Տըղան ուրա՜ն էն ա՜վա՜լի մըհակը յոր ա օնըմ, քյընըմ։

Հըսնըմ ա տոռ, ուրա՜նց ակուշկավը եշըմ, տըեսնըմ քյուրը եխտոտ, շո՜րերը ճըրղոտած, մազերը թախկուճ տըեռած, հեն ա տանը նըստած։

Քյուրը վեր ախպորը տեսնըմ ա, ասըմ ա. — Ա՛յ ախպեր, պարով ըս եկալ, հազար պարի յըս եկալ, պեր վըեննավըտ մին կանանչ-կյա՜րմուր թիլ քըցիմ, վեր էսքան վախտ եկալ չըս, մըհեկ եկալ ըս։ Դե եք տոռ, եք նըստի դինշա՜ց։ Յըես էլ քյինիմ ծիտ կապիմ։ Ախպերը տանը նըստըմ ա։ Մին խրեգյ ետը քյուրը կյամ ա, ասըմ. — Ա՛յ ախպեր, ծիտ չորս վըննանի յա իլա՞լ, թա՜ իրե՞ք։

Ախպերը դա՜ստի կըլոխ ա ընգնըմ, վեր ծիյին մին վըեննը կըերալ ա։ Ճարը կըտրած ասըմ ա. — Զիս իրեք վըննանի յա իլա՜լ։

Քյուրը մին էլ ա քյինըմ ծիյին մին վըեննը օտըմ, կյամ ասըմ. — Ա՛յ ախպեր, ծիտ իրեք վըննանի յա իլա՜լ, թա՜ է՞րկու։

Ախպերը ճարը կըտրած էլհա ասըմ ա.— Ծիս էրկու վըննանի յա իլա՜լ։

Քյուրը մին էլ ա քյինըմ, ծիյին էն էրկու վըեննը օտըմ, կյամ ասըմ. — Ա՛յ ախպեր, ծիտ առանց վըեններ ա իլա՜լ, թա՜ վըննա՞վեր։

Ախպերը ասըմ ա. — Հա՛, ա՛ քյուր, ծիս առանց վըեններ ա իլա՜լ։

Վեր քյուրը մին էլ ա քյինըմ, ըտրանց հըրեանը կյամ ա, էտ տըղին ասըմ. — Շուտ ըրա, տուս եք, քյինի, ծիտ լոխ ուտելու յա, կյա քյըեզ էլ օտի, փախի, աղադվի, քու մոր կըերալ ա, ամմեն հինչ կըերալ ա, քյըեզ էլ ա ուտելու։

Ախպերը վըեր էտ լոխ ըսկանըմ ա, մին տոպրակ մոխերավ լըցնըմ ա, պատալոկան կախ տամ, վեր քյուրը կյա, գյիդա, թա ինքըն ա, օղի թա՜ օտի, աշկերը մոխրավ լըցնըվի, կարի վեչ շուտ հետան հըսնի։

Էտ ախճիգյը սաղ ծին օտըմ ա, կյամ, թա ախպորըն էլ օտի, տեսնըմ ա ախպերը տանը չի։ Տա յրա յա ընգնըմ էտ մոխրավ լիգյը տոպրակին, գյուդում ա, թա էն ա ախպերը մեչինը։

Վեր տոպրակը ճըղվըմ ա, մոխերը եր ա տըեռնըմ, տըեռնըմ

աշկերը։ Տա մինչև աշկերը սըրփըմ ա, էտ տըղան խիլլա̈ տեղ փախ-չըմ ա։ Ախճիգյը կըռքընին սրած, կըռքընին ղըր-ըցնելավ, կըլզաղած, կըտաղած ախպորը հետան վաղ ա տամ, խե հո՞ւնց ա վազ տամ, թրնչընափա̈սը եր իլա̈ծ, տըհա̈նելավ, քըրտնընքթաթախ։

Ճընապարին քյինա̈ղ-եկողա հըրցնըմ ա։

Քյինող-եկողնին էլ վըխելան նըհետ ասըմ ըն տըեղը։ Էտ ախ-ճիգյը ախպորըն ա հըսնըմ էն վախտը, վեր ախպերը հըսած ա ինըմ մին ղուղ տըեղ։ Ըտեղ էլ ինըմ ա էրկու ծըեռանի ծառ։

Ախպերը տեսնըմ ա, վեր քյուլը հըսալ ա ուրա̈ն, եր ա ինըմ մին ծըեռանի ծառ։

Քյուլը կյամ ա, ըսկըսըմ էտ ծըեռանի ծառը կըռքընեռավը կրոծկործիլը։

Էտ տըղան վախտին էն պառավ ծընողնեռին ասալ ա, վեր թա ուրա̈ն մին սենձ ըլտահի, օրվան կըթած կաթնը սըվըրնալու յա, էն վըտխալը թող դա̈ստի պեց թողի էն էրկու կյո̈ւլին ճոտերին։

Մարը եշըմ ա, տըեսնըմ, օրվան կըթած կաթնը սըվացալ ա։ Տա պեց ա թողըմ էտ կյո̈ւլին ճոտերին։ Ըտըրանք վազ տալավ, թանշռց տալավ, լո̈ւղո̈ւնին հանած, կյամ ըն հըսնըմ էտ տըղին, համին էն վախտը, վեր քյո̈ւլը էտ ծառը կըռքընեռավը կըտրալ ա՛ր եր քըցալ, ախպերըն էլ էն մին ծըեռանի ծառին ճըղան փըռնելով անց ար կացալ էն մին ծառը, քյուլը էլհա կըռքընեռավը էտ էրկուն-ցի ծառըն էլ ա կըարըմ, խրեկ ա մընըմ, թա եր քըցի, ախպորը օտի։ Էտ կյո̈ւլին ճոտերը յրա ըն պըրծընըմ մին շընչըմ էտ ըխճըկանը ղըրտըռ-պատառ անըմ։ Ախպերը աղադվըմ ա։ Համ ազադվըմ ա, համ էլ թըըվորը մեխկըն ա կյամ, ըհա̈ մին տիրև ա յոր օնըմ, առնան թաթախ անըմ տինըմ ծոցըմը։

Էտ տըղան ետ ա տըեռնըմ հըղե ընգնըմ, վեր կյա տոն, էն պա-ռավնեռին կոշտը։ Ճընապարին էլհա էն քյարվանը ետ տըեռնըմ ա ինըմ։

Քյարվանին տա̈րը էտ տըղին անա հըրցնըմ ա, ասըմ.— Ա՛յ տը-ղա, թա̈ կարիս ասիս էտ ծըեռքիտ մըհակը հի՞նչ ծառա յա, լոխ քյար-վանըռ քյըեղ կտամ, թա̈ կարիս վեչ ասիս, կըլո̈խըտ պուչ ըմ տալու։

Էտ տըղան էրդա̈ն մըեթկ ա անըմ, գյուղում չի, թա̈ հինչ ասի։ Էտ վախտը բիրդա̈ն քյըըվորը ա̈ռնա̈ն, էն վեր տիըևը թաթախ էր ըրալ, մին սա̈ս ա կյամ։

— Ճըռռ ճապկե, ճապկեճըլապկե։

Էտ տըղան իտի էլ ասըմ ա։

Տու մի ասիլ, մըհակը ըհա̈ ճապկե ծառան ա ինըմ։

էտ տրղան ասրմ ա. — Մրհակրս ճապկե ծառան ա։

էտ քյարվանին տարը լոխ օղտերը ուրանց պրեռներավը էտ տրղեն ա տամ։ Տա յոր ա օնրմ, քյինրմ։ Վեր տոն ա հրսնրմ, էտ պառավնին ուրխանրմ ըն, պերրմ ըն ըտրա հետի մին լավ ախտիգ օզրմ, փրսակրմ։ Օխտը օր, օխտը քրշեր հրրսանիք ըն անրմ։

Ըտրանա ետը լոխ լավ ըն ապրրմ։